ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» հոկտեմբերի 2023թ. **N-----Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու անդամ Արմեն Փամբուխչյանին նշանակել Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝

«3. Քաղաքապետի տեղակալներին քաղաքապետի ներկայացմամբ նշանակում է ավագանին:

4. Քաղաքապետի առաջին տեղակալը պետք է լինի Երևանի ավագանու անդամ:»:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանուն առաջարկվում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ նշանակել Արմեն Փամբուխչյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

Արմեն Փամբուխչյանի կենսագրությունը

Ծնվել է 1984թ.-ին նոյեմբերի 26-ին, Երևանում:
2001-2006թթ. սովորել է Երևանի Հրաչյա Աճառյան համալսարանի իրավաբանական ֆակուլտետում:
2002-2004թթ. ծառայել է ՀՀ Զինված ուժերում:
2017թ. նշանակվել է «Անելիք» բանկի խնդրահարույց ակտիվների կառավարման վարչության ղեկավար:
2018թ. հունիսի 6-ին ՀՀ վարչապետ Նիկոլի Փաշինյանի որոշմամբ նշանակվել է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի առաջին տեղակալ:
2018թ. դեկտեմբերի 9-ին կայացած Ազգային ժողովի ընտրություններում «ԻՄ ՔԱՅԼԸ» դաշինքի համապետական ցուցակով ընտրվել է պատգամավոր:
2020թ. սեպտեմբերի 17-ին վայր է դրել պատգամավորական մանդատը:
2020թ. սեպտեմբերի 25-ին նշանակվել է արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ: Նույն թվականի դեկտեմբերի 28-ին նշանակվել է արտակարգ իրավիճակների նախարարի առաջին տեղակալ:
2022թ. ապրիլի 12-ին նշանակվել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար:
2022թ. հոկտեմբերի 25-ին տեղի ունեցած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության 6-րդ համաժողովին ընտրվել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչության անդամ:
2023թ. հունիսի 30-ին ազատվել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի պաշտոնից՝ նախարարության լուծարման կապակցությամբ:
2023թ. սեպտեմբերի 17-ին Երևանի ավագանու ընտրություններում ղեկավարել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական շտաբը:
2023թ. սեպտեմբերի 17-ին կայացած Երևանի ավագանու ընտրություններում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության համամասնական ցուցակով ընտրվել է Երևանի ավագանու անդամ:
Ամուսնացած է, ունի երկու դուստր: